«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի
Խորհրդի 2026թ.մարտի 04-ի
որոշմամբ /արձանագրություն N 07/26/

Խորհրդի նախագահ

Ա. Չաղարյան _____
/ստորագրություն/

Կ.Տ.

Շահութաբաժնային քաղաքականություն

ԵՐԵՎԱՆ 2026

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Կարգավորման շրջանակը.

Շահութաբաժնային քաղաքականությունը սահմանում է «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) կողմից հասարակ (սովորական) բաժնետոմսերի շահութաբաժինների բաշխման նպատակները, սկզբունքները, շահութաբաժինների վճարման կարգն ու պայմանները, շահութաբաժինների վերաբերյալ որոշումներ ընդունող մարմինների միջև իրավասությունների և պարտականությունների բաշխումը:

1.2. Կիրառման շրջանակը.

- Բաժնետերերի Ընդհանուր Ժողով,
- Խորհուրդ,
- Գործադիր մարմին (տնօրեն),
- Շահութաբաժինների վճարման գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներ:

1.3. Կարգավորող փաստաթղթեր.

- «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,
- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք,
- ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտեր,
- Ընկերության կանոնադրություն,
- Ընկերության Ռազմավարական զարգացման ծրագրի:

2. Նպատակները և սկզբունքները

2.1. Քաղաքականության նպատակները.

2.1.1. Ապահովել Բաժնետերերի համար շահութաբերության ընդունելի մակարդակ, որը լավագույնս կհավասարակշռի բաժնետերերի և Ընկերության շահերը:

2.1.2. Ապահովել Ընկերության ռազմավարական զարգացման ծրագրի իրականացումը, կատարողականի անհրաժեշտ ցուցանիշները:

2.1.3. Ապահովել անհրաժեշտ պայմաններ, որոնք թույլ կտան Ընկերությանը մնալ մրցունակ, շահութաբեր և գրավիչ ներդրողների և ֆինանսավորողների համար:

2.2. Քաղաքականության սկզբունքները.

2.2.1. Շահութաբաժինների վճարման որոշումները կայացվում են ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

2.2.2. Շահութաբաժինները բաշխում են Ընկերության չբաշխված զուտ շահույթից, որը հաշվարկվում է՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

2.2.3. Շահութաբաժինների բաշխման որոշումների ընդունումը և վճարումն իրականացվում են Ընդհանուր ժողովի, Խորհրդի, Գործադիր մարմնի և ներգրավված ստորաբաժանումների միջև իրավասությունների և պարտականությունների բաշխման սկզբունքով:

2.2.4. Ընկերությունը պետք է պահպանի կապիտալի համարժեքության բավարար մակարդակ՝ ռազմավարական ծրագրով նախատեսված Ընկերության զարգացումն ապահովելու համար:

2.2.5. Ընկերությունը չի երաշխավորում շահութաբաժինների վճարումները, և կարող է շահութաբաժիններ չվճարելու մասին որոշում ընդունել:

3. Շահութաբաժինների բաշխման կարգը, սահմանափակումները

3.1. Որոշումների ընդունում.

3.1.1. Տարեկան շահութաբաժինների բաշխման որոշումը Խորհրդի առաջարկությամբ ընդունում է Ընդհանուր ժողովը: Բաշխման որոշմամբ Ընդհանուր ժողովը սահմանում է բաշխման ենթակա շահութաբաժինների չափը, դրանց վճարման կարգն ու ժամկետները:

3.1.2. Միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունում է Խորհուրդը՝ սահմանելով շահութաբաժինների չափը, դրանց վճարման կարգն ու ժամկետները: Ընդ որում միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը պետք է լինի ոչ շուտ, քան որոշման ընդունման պահից 30 օր հետո:

3.1.3. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են բաժնետերերի ռեեստրում Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ,

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են բաժնետերերի ռեեստրում՝ Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

3.2. Սահմանափակումներ.

3.2.1. Շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել համապատասխան ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության չբաշխված զուտ շահույթի 75 տոկոսը:

3.2.2. Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժինների 50 տոկոսը, ինչպես նաև վճարման պահի դրությամբ չբաշխված զուտ շահույթի 75 տոկոսը:

3.2.3. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել այդ տարվա համար արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

3.2.4. Եթե Ընդհանուր Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների սահմանված չափը հավասար է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

3.2.5. Եթե Ընդհանուր Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարվա համար արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

3.2.6. Շահութաբաժինների բաշխումը արգելվում է հետևյալ դեպքերում.

ա) շահութաբաժինների բաշխման որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

բ) Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

գ) շահութաբաժինների բաշխման պահին Ընկերության կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին առկա չբաշխված զուտ շահույթի գումարը,
դ) ամբողջությամբ համալրված չէ կանոնադրական կապիտալը,
ե) շահութաբաժինների բաշխումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնի Ընկերության ֆինանսական վիճակի վատթարացմանը,
զ) շահութաբաժինների բաշխման հետևանքով խախտվում է կամ կարող է խախտվել առնվազն մեկ տնտեսական նորմատիվ,
է) եթե շահութաբաժինների բաշխմա արդյունքում կապիտալի համարժեքության ցուցանիշը կնվազի Ընկերության կողմից սահմանված ներքին թիրախային մակարդակից ցածր:
ը) ՀՀ կենտրոնական բանկը սահմանափակել կամ արգելել է Ընկերության կողմից շահութաբաժինների բաշխումը,
թ) ՀՀ օրենսդրությամբ և/կամ Ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում:

3.3. Շահութաբաժինների վճարման կարգը.

3.3.1. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության գլխավոր պահուստին հատկացումներից հետո մնացած շահույթից: Ընդ որում, շահութաբաժինները վճարելիս Ընկերությունն առաջնորդվում է նորմատիվային զուտ շահույթից և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն հաշվարկված զուտ շահույթից նվազագույնով:

3.3.2. Շահութաբաժինները վճարվում են ՀՀ դրամով՝ միանվագ կամ մաս-մաս փոխանցում կատարելու միջոցով:

3.3.3. Շահութաբաժիններ կարող են վճարվել հետևյալ պայմանների պահպանման դեպքում.

ա) առկա է համապատասխան ժամանակահատվածի դրությամբ չբաշխված զուտ շահույթ,
բ) իրավասու մարմնի կողմից կայացվել է շահութաբաժինների վճարման որոշում, որով սահմանվել են վճարման ենթակա շահութաբաժինների չափը և ժամկետները,
գ) շահութաբաժինների վճարման պահին առկա չէ սույն քաղաքականության 3.2.6 կետում նշված հանգամանքներից որևէ մեկը:

3.3.4. Շահութաբաժինների վճարումը իրականացվում է փաստաթղթավորված ձևով՝ համապատասխան գրավոր արձանագրության հիման վրա:Յուրաքանչյուր վճարում պետք է ուղեկցվի վճարման որոշման, բաժնետերերի ցուցակի և հաշվարկի մեթոդաբանության գրավոր փաստաթղթավորմամբ:

4. Շահութաբաժինների վերաբերյալ որոշումներ ընդունող մարմինների միջև իրավասությունների և պարտականությունների բաշխումը

4.1. Շահաբաժնային քաղաքականության իրականացման նպատակով Ընկերության կառավարման մարմինների պարտականությունները հետևյալն են:

4.1.1 Բաժնետերերի Ընդհանուր ժողով

4.1.1.1 հաստատում է շահութաբաժինների բաշխման վերաբերյալ որոշումը, վճարման կարգը և դրանց չափի վերաբերյալ որոշումները
4.1.1.2 հաստատում է շահութաբաժինների վերաբերյալ փոփոխությունները Ընկերության կանոնադրությունում:

4.1.2 Խորհուրդը

4.1.2.1 հաստատում է շահութաբաժնային քաղաքականությունը
4.1.2.2 Ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում շահութաբաժինների վերաբերյալ վճարումը, վճարման կարգը և դրանց չափի վերաբերյալ որոշումների առաջարկները

4.1.3 Ընկերության տնօրենը և Ֆինանսական տնօրենը՝

4.1.3.1 Տնօրենը իրավասու է խորհրդին առաջարկություններ ներկայացնել բաժնետոմսերի դիմաց վճարվող միջանկյալ և/կամ տարեկան շահութաբաժինների /ներառյալ՝ դրանց բաշխման/վճարման չափի, կարգի և պայմանների/ վերաբերյալ
4.1.3.2. Ֆինանսական տնօրենը ապահովում է միջանկյալ և տարեկան շահութաբաժինների բաշխման/վճարման ամբողջ գործընթացի համապատասխանությունը Ընկերության իրավասու կառավարման մարմնի (Բաժնետերերի Ընդհանուր Ժողով և Խորհուրդ) որոշմամբ սահմանված կարգին ու պայմաններին /ներառյալ՝ ժամկետներին/, ինչպես նաև սույն քաղաքականությամբ սահմանված պահանջներին:

4.1.4. Բոլոր որոշումները և վճարումները պետք է գրանցվեն համապատասխան առցանց և ֆիզիկական փաստաթղթավորման համակարգերում՝ ապահովելով ամբողջ գործընթացի հստակ վերահսկողությունը և հետագա աուդիտորական ստուգման հնարավորությունը:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1 Սույն քաղաքականությունն ուժի մեջ է մտնում Խորհրդի կողմից հաստատվելու օրվանից:

5.2 Քաղաքականությունը ենթակա է վերանայման առնվազն երեք տարին մեկ կամ անհրաժեշտության դեպքում:

5.3 Փոփոխությունները հաստատվում են Խորհրդի կողմից: